

19055

1887

991.99

---

U-50

28 JUN 2005

350

ՄԿՐՏԻՉ ԱՋԷՍԵԱՆ

ՀՈՅՍ ԵՒ ՍՏՈՒԵՐՔ

ՔԵՐԹՈՒԱԾՔ



Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Գ. ՊԱՂՏԱՏԵԱՆ  
(Արամեան)

1887

ee 128 807. 99

4 - 50

891.99

Ա-50

19 NOV 2010

ԱՌ ՎՍԵՄԱՓՈՅԼ

**ՅԱՐՈՒԹԻՒՆ ԷԹԵՆՏԻ ՏԱՏԵԱՆ**

ԽՈՐՀՐԴԱԿԱՆ

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ

Նուէր

ամենախորին յարգանք

Հեղինակին

Մ. Ա.

07 APR 2014

19055

# Հոյս եւ Ստուերի

ՔԵՐԹՈՒԱՆՔ

Այլ երկասիրութիւնք Հեղինակին

Ժպիտք եւ Արտասուք, քերուածք.

Վահագն, դիւցազներգութիւն.

ԻՄ ԽՈՐՀՈՒՐԳՆԵՐ



57527-66

Շատեր ինձ ուղղեն այս հարց — «Ի՞նչ խորհիս» .  
 Եւ երբ բացատրեմ խորհուրդներ որ յիս  
 Կուտակեալ յուզին իբրև բուխ ամբեր,  
 Ուերնին բորվեն՝ ժպտին անտարբեր :

Ես խորհիմ մենիկ՝ խորհիմ ինձ համար,  
 Գիտելով զատողեր որ յերկնից կամար  
 Փայլին գեղեցիկ, դառնան հանապազ,  
 Աշխարհներ անբիւ գերդ ծովուն աւազ :

Նախասահմանեալ շրջանի մեջ՝ ժիր  
Ամեն ինչ դառնայ, շարժի ամեն իր.  
Ջայն, յոյս, ջերմութիւն շարժումեն՝ ծագի,  
Շարժումն արտադրէ կեանք, շունչ եւ ոգի :

Խորճիմ խօսիմ մտուջ այն աստեղաց հետ  
Որոց բաղդատմամբ երկիրն է մի կետ,  
Եւ որք կարող են գովկիան մեր յայն  
Ծծելով քամել ի մի ումպ միայն :

Ի՞նչ վեճ են՝ հոգիք որ բնակին հոն ,  
Ի՞նչ յայն է նոցա մտաց հորիզոն ,  
Եւ գիրենք կրժեն ոչ կասկած կամ ահ  
Զի հշմարտութեան միշտ պայծառ է ջահ :

\* \* \*

Թղբատեմ բնութեան գաղտնեաց զիրքն անձառ.  
Տեսեալ հետեւանքն՝ որունեմ պատճառ ,  
Թէ ինչպէս երկու յար նման տունկեր  
Քովէ քով աճին տան արդիւնք տարրեր :

Մի եւ նոյն հողէն, ջրէն եւ օդէն  
Իրենց պէտք եղած նիւթն ինչպէս գատեն ,  
Ինչպէս հաւաքեն , բաղադրեն ճարտար  
Չանագան հոտ, համ եւ գոյն բիւր հագար :

Նոյն յարկին ներքեւ կրթուած եղբարք  
Այսպէս գանազան կրեն ձիրք եւ բարք.  
Մին յանդուգն ընտրէ փառաց ասպարեզ,  
Մինչդեռ գիտութեանց հետեւի միւսն հեզ :

\* \* \*

Ժպիտք եւ արցունք, հաճոյք եւ ցաւեր  
Կենաց պատկերին կազմեն յոյսն ու ստուեր.  
Նոր նոր գզգզմունք եւ կիրք հակառակ  
Յաջորդելով՝ կեանքն առնեն ներդաշնակ :

Ինչպէս ցուրտ եւ տօք, ինչպէս մութ եւ յոյս.  
Այսպէս վիշտ եւ խինդ, այսպէս հոգ եւ յոյս  
Լծեալ են կենաց միշտ գոյզ անբաժան ,  
Անխուսափելի օրէնք եւ պայման :

Ոչ բերրի առնել կարող է արեւ  
Այն դաշտեր գոր ոչ ոռոգէ անձրեւ ,  
Եւ մահ եւ ծնունդ՝ կենաց երկու ծայր ,  
Միշտ գրկեն գերար իբրեւ քոյր եղբայր :

Տգեղն ու ջքնաղ, յոռին եւ ագնիւ  
Կենաց շղթային օղակներ անբիւ,  
Երկուքն ալ ունին պաշտօն հաւասար ,  
Օրհնեալ է բարին , չարն է օգտակար :

Ո՛չ, մի հարցընէք թէ ես ինչ խորհիմ,  
Գրիչն իմ սրտիս չէ հաւատարիմ.  
Ա՛յլ է տեսակեան իմ եւ ձերն է այլ,  
Մուրք բուի ձեզ հոն ուր ես տեսնեմ փայլ :

Անհաշտ խորհրդոց որ յիս տան կոիւ  
Այս բղբին յանձնեմ սոսկ ստուերն հագիւ.  
Եւ պատառելով զանուրջս իմ պղտոր  
Ցիւր ու ցան հողմոց տամ կտոր կտոր :

## Վ Ո Ս Փ Ո Ր

Ալեաց մեջէն կանգնած վեր՝  
Զույգ հրաշալի աշխարհներ,  
Ապշած դիտեք միշտ զիրար  
Իբրեւ երկու սիրանար,  
Եւ Տէր ժպտի ձեր վերայ  
Սիրուն ափունք Վոսփորայ :

Խարտեաշ վարսիւք՝ աջք նուաղ,  
Դու եւրոպա հարս չքնաղ,  
Եւ բաւ մօրուօք՝ յօնք նսեմ,  
Ասիան՝ քո նստի դեմ.  
Ո՛վ հեշտ ափունք Վոսփորայ,  
Տերն իսկ ժպտի ձեր վերայ :

Ընդ երկնքով ձեր պայծառ  
Ջկայ ձմեռ ոչ ամառ ,  
Այլ առաւօտն է գարուն ,  
Երեկոյին այ աշուն .  
Զուարթ ափունք Վոսփորայ  
Տերն իսկ ժպտի ձեր վերայ :

Գարե ի դար դուք երկու  
Իշխեք հօգօր ծովերու  
Որ աշխարհիս ծայրերէն  
Երկրպագուս ձեզ բերեն ,  
Եւ Տեր ժպտի ձեր վերայ ,  
Կապուտ ծովեր Վոսփորայ :

Երբոր հովեր մեղմաշունջ  
Ծաղիկներու շարժեն փունջ ,  
Լյնափես անոյշ հոտ բուրեն  
Որ հրեշտակներ հրապուրեն ,  
Եւ Տեր ժպտի ձեր վերայ  
Ծաղկեալ ափունք Վոսփորայ :

Ծածկեն քփեր բոջունք թիւր  
Եւ հովիտներ զով աղբիւր  
Սոխակին հետ վարդենիք

Տօնեն ամեն օր հարսնիք ,  
Եւ Տեր ժպտի ձեր վերայ  
Չքնաղ ափունք Վոսփորայ :

Երբոր յայգուն վարդամատ'  
Շարուին բլրոց ձեր ճակատ  
Շող' մարգարիտ իբր աւազ ,  
Հիացեալ ընդ այս երազ'  
Տերն իսկ ժպտի ձեր վերայ  
Օրհնեալ ափունք Վոսփորայ :

Իսկ երբ լուսին ծագելով  
Յոյլայ պատկերն լայիս զով ,  
Ձեռ գիտեր ձրն է ջքնաղ ,  
Եւ հաճելով ընդ իւր խաղ'  
Տերն իսկ ժպտի ձեր վերայ  
Պայծառ այլիք Վոսփորայ :

Կես զիշերին' սիրահար  
Կուսանք երբոր թիավար  
Սահին 'ի ջուրս կապուտակ  
Եւ նուագեն անուշակ ,  
Տերն իսկ' ափունք Վոսփորայ ,  
Ժպտի իրենց այ վերայ :

Ոչ Հեյուետիա, Նարոյի  
 Ոչ են քան ձեզ սիրալի.  
 Թագաւորներ են անբախտ  
 Որ տեսած չեն զայս դրախտ.  
 Եւ Տեր ժպտի ձեր վերայ  
 Անմահ ափունք Վոսփորայ :

Թողունք որ բոյն անվրդով  
 Կամիք շինել վարդերով.  
 Աղջկունք՝ եթէ սիրոյ բել  
 Կամիք երկար ուրբել,  
 Եկէք յափունս Վոսփորայ  
 Եւ Տեր հսկէ ձեր վերայ :

Տրտում հոգիք նաեւ դուք  
 Որ փնտռէք ծառոց շուք,  
 Կամ ուրանաք դուք՝ յամսոք,  
 Արարչութեան հրաշքն ու փառք,  
 Եկէք յափունս Վոսփորայ  
 Եւ Տեր գբայ ձեր վերայ :

Ի՞նչ կայ հեշտ յերկրի, ինչ կայ սուրբ յերկին  
 Քան սիրասուն մայր, քան վեհանձրն կին.  
 Կին՝ սիրուն եակ, փափուկ արարած,  
 Արարչին մատամբ ծաղիկ մ'է հիւսուած :

Եւ մարդն առաջին հիացաւ գեղոյն,  
 Չքնաղ հասակին, հերացն ոսկեգոյն,  
 Եւ արբենայով անոյշ ակնարկէն,  
 Մոնչեց ուժգին՝ պարտեցաւ անդէն :

Կին՝ սիրուն եակ, կին տկար եակ,  
Առաջին ժամեն տարա յաղբանակ.  
Մարդ սիրեց զնա առանց մեկնելու  
Զեւրբին նորա ում չեղեւ հասու :

Կին՝ արարչութեան կետ եւ նպատակ,  
Եւ մեք շուրջ նորա դառնամք անգիտակ.  
Իւր հիմնական սուրբ քօղին ներքեւ  
Անձնուէր կինն է երկնային պարգեւ :

\* \* \*

Բայց կրեսն քե երբ Աստուած գեղ՝ շնորհ  
Դրոշմեր ի ճակատ այս հրեշտակին նոր,  
Նախանձոտ Սատան՝ շնչով ժանտաբոյր  
Շօշափեց նորա հոգին լուսաբոյր :

Եւ կինն ալ փոփոխ՝ մոռցաւ զիւր կոչում  
Պարտուց մեջ խարխուլ՝ դրժեց զիւր երզում  
Եւ երբեմն զնա աղետ կամ նախանձ  
Յանօրէն շաւիղ մղեցին անասանձ :


Բայց արդե՞ք կնոջ սիրոյ յորդ հոսանք  
Ոչ տան մոռցընել նորա սխալանք.  
Արդե՞ք ծննդեան ցաւեր մահարեր  
Ոչ են բաւական քաւել զիւր մեղքեր :

\* \* \*

Հրեշտակ կամ սատան . . . նորա մի ժպտեն  
Դիւցագունք եւ վեհ հանձարներ յառնեն .  
Մի հայեաց նորա զաշխարհ դղրդէ,  
Բանակներ ի վեր կանգնէ յանդնդէ :

Բարւոյ եւ չարի քան մարդն զգայուն,  
Ինչ որ ալ լինի կինն է միշտ սիրուն.  
Սիրտ նորա անհուն սիրոյ է խորան,  
Հոգին . . . անբաւանց գաղտնեաց որորան :

Կին՝ երկու անհաշտ տարրերէ խառնուրդ՝  
Անմահին մտաց գեղեցիկ խորհուրդ,  
Կին՝ սիրուն եակ՝ առեղծուած անել  
Զոր պէտք է պաշտել բայց ոչ բացաարել :



## ՅԵՏ ՅԻՍՈՒՆ ԶՄՐԱՆ

Յետ յիսուն ձմրան՝ ղունիմ ստացուած,  
Ոջ տուն՝ ոջ հիւղիկ յարդէ ծածկուած,  
Բայց փոփոխ բախտին պարզեւներ խարդախ  
Արհամարհելով՝ երգեմ միշտ ուրախ :

Յետ յիսուն ձմրան՝ ղեռ ծովեր ու սար,  
Արտեր ոսկեվարս, դաշտ հովիտ դաշար  
Դիտեմ ընդ երկար՝ վայելեմ լոփիկ,  
Եւ այս շատ իսկ է սրտիս իմ փոքրիկ :

Յետ յիսուն ձմրան՝ տակաւին կայտառ  
Շրջիմ հետիոտս 'ի ձոր եւ յանտառ,  
Եւ ոջ նախանձիմ հարստին երբեք  
Որ ձոխ կառքին մեջ երբայ ցաւաբեկ :

Յետ յիսուն ձմրան՝ պատերն են անգարդ  
Համեստ սենեկիս, բայց երբ լոյս զուարթ  
Ներս կը բափանցե, ցոյց տայ ինձ պատկեր  
Սիրուն զաւակացս՝ իմ միակ գանձեր :

Յետ յիսուն ձմրան՝ ղունիմ ստացուած,  
Ոջ մի բիզ պարտեզ, բայց գիտես Աստուած,  
Թե ոջ շրքներես բուած է գանգատ .  
Թող միշտ երջանիկ բայց լինիմ աղքատ :

Յետ յիսուն ձմրան՝ ո՛ Տեր ինձ մի տար  
Ոջ փառք մուրացիկ, ոջ սիրտ վշտահար,  
Այլ տո՛ւր ինձ ճարել ճացիկ անխարդախ  
Ան տո՛ւր ինձ երգել միշտ զոն եւ ուրախ :



## Ն Ո Ր Ա Մ Ի Ն

3 Մայիսի 1887

Մայիսի ընծայ՝  
Աղւոր լուսրնկայ,  
Ո՞ր աստղին ծոցէն  
Եկար *խեր* ու *շեւ* :

Մայիսի հոգեակ՝  
Սիրուն աղանեակ,  
Ո՞ր բոցնոյ բունէն  
Ծնար *խեր* ու *շեւ* :

Մայիսի նուէր՝  
Վարդերու ընկեր,  
Ո՞ր ծաղկի հոտէն  
Շրթունք քո բուրեն :

Մայիսի ձօնած  
Քնքուշ արարած,  
Ո՞ր վարդի ցօղէն  
Աչուկք քո ըղխեն :

Մայիսի ընծիւղ՝  
Ծաղկալից գամբիւղ,  
Ո՞ր խնկի շատէն  
Քուսար *խեր* ու *շեւ* :

Մայիսի ժպիտ՝  
Փայլուն մարգարիտ,  
Ո՞ր անոյշ հովէն  
Բերես *խեր* ու *շեւ* :

Մայիսի պարգեւ  
Զուարթուն բերեւ,  
Աստուծոյ քովէն  
Բերիք *խեր* ու *շեւ* :

## Ս Ի Կ Ա Ր

Սիկարին ծուխն է սփռեալ յընդհանուր,  
 Հարուստ եւ աղքատ սիրեն նորա հուր.  
 Սիկարն է բերեալ գիտութեանց լապտեր  
 Զի նորա բոցէն ծնան շատ գիտեր:

Ես ոչ մոլի եմ եւ ոչ դեզ առ դեզ  
 Սիկարներ ընեմ յաճախ ողջակեզ,  
 Եւ բեպեռ կրծիս է վնասակար,  
 Սակայն կը սիրեմ զանուշիկ սիկար:

Տրտում քե զուարբ նստիմ եւ խորհիմ՝  
 Զունիմ սիկարին պէս հեշտ մտերիմ.  
 Նոյն է երկուքին մեր ճակատագիր,  
 Քիչ քիչ կը վատիմ եւ դառնամ մոխիր:

Իսկ երբ մուր պատե վշտացեալ հոգւոյս՝  
 Ինձ առաջնորդէ իմ սիկարին լոյս,  
 Եւ բարձրանալով մովսն ոլոր ոլոր,  
 Հետը կը տանի ցաւերըս բոլոր:

Օ Ղ Ի

Երբը կը խմեմ մի գաւար օղի՝  
Յոգնած մտքիս մէջ նոր լոյս շողշողի,  
Եւ քերենալով հոգերու բեռէն՝  
Դիւրիջ երազք զիս մեղմիկ որորեն :

Երբ երկու գաւար կը խմեմ օղի՝  
Հեշտ հրճուանաց մէջ սիրտ իմ ողողի,  
Պահ մի կը դառնամ ժիր երիտասարդ  
Եւ կեանքն ինձ բուրի առանց փուշի վարդ :

Երբ երեք գաւար կը խմեմ օղի՝  
Իրական աշխարհ աչքես սքողի,  
Եւ հոգիս կարծես մի գուարբուն մոգ՝  
Տանի դժոխքէն յԱբրահամու գոգ :

Մ Շ Ա Կ

Հերիք, մշակ, սուգ ի ճակատ,  
 Անշարժ կանգնած՝ յուսահատ  
 Աչօք դիտես խանձած արտերդ  
 Եւ հառաչես մերք ընդ մերք :

Հերիք դիտես հունձքերդ անգօր,  
 Հասկերն ամուլ՝ միջակօր,  
 Զոր յօրդ քրտամբ եւ անձանձիր  
 Խնամելով ցանեցիր :

Հերիք գննես ժլատ ամբեր  
 Որ կը սահին անտարբեր,  
 Եւ կը ծաղրեն խուլ՝ անողոք  
 Սրտիդ վերքեր ու մորմօք :

Ինչպես մայր մի որ իւր հիւանդ  
 Մանուկն հսկէ սիրախանդ,  
 Ափսոսալով եւ դու այսպես  
 Վատոյժ հունձքերդ գրկես :

Մերք գաջն օրհնես որ ի վերայ  
 Թշուառ գլխոյդ ծանրանայ,  
 Եւ մերք յիմար՝ սպառնալից  
 Բողոքես ընդդէմ երկնից :

Մշակ, հերիք կուրծրդ բաղխես  
 Արաստուելով դառնապես,  
 Հերիք տրտմիս եւ վշտանաս  
 Կշռելով շահն ու վնաս :

Նօրի մանկանց տրտունջ եւ լաց,  
 Սպառնալիք վաշխառուաց,  
 Մութ ապագայն եւ անեղ սով  
 Հերիք յիշես սուկալով :

Արտորայիդ քարացեալ հող  
Ում գովարար պակսի ցող,  
Հերիք փորեա եղունգներով,  
Կամի՞ս բաղուիլ հունձքիդ քով ...

Ձախորդութեան մէջ մարդն յաւեա  
Պետք է կոտի բախտին հետ. ...  
Քաջին համար լայն ինչ օգուտ,  
Քաջին համար վիշտն է սուտ :

Կտրիճ սրտին՝ վիշտն է աղբիւր  
Դիւցազնական գործոց բիւր.  
Կտրիճ սրտին՝ վիշտն է խթան  
Եւ առաջնորդ յաղբութեան :

Յուան , մշակ , սիրտ առ հապա ,  
Դարձն աչքերդ յերուպտ ,  
Տես այն փորձեր գործեր հակալ  
Որով երկիր զարգանալ :

Տե՛ս , արհեստն հոն պողաբերի ,  
Հոն բնութիւնն է գերի ,  
Գերի բաղդն իսկ անագորոյն  
Մարդու կամաց՝ հանճարոյն :

Ճեղքէ չափէ լեռ , ծով ու ձոր  
Հոն մեքենան բոցաւոր .  
Հոն շանքն իրեն զձեն շեղի  
Եւ գետ փոխէ զիւր ուղի :

Հոն անտառներ հասուցեք են  
Որ բոնութեամբ ամպերէն  
Անձրեւ քամեն յորդառատ ,  
Ինչպէս կովու կրեն կար :

Յուան , մշակ , եւ վստան լե՛ր  
Թէ անցնին այս սեւ օրեր ,  
Եւ այս տարուան լնուն կորուստ ,  
Յաջորդ տարուան հունձք հարուստ :

## Մ Ա Ն Ն Ո Ր Փ Ե Ս Ի Ն

Գուք որ դեռ երեկ պար բոնեիք հոս  
 Ի փող հարսանեաց եւ գարնեիք ծափ,  
 Եկայք արդ նորեն լսել գոյժ՝ ափսոս,  
 Գոյժ որ ոսկերաց մեջ հեղու սարսափ :

Տեսէք մայր փեսին ոչ եւս զարդարուած,  
 Այլ խուրձ զգեցեալ՝ արձան յուսահատ.  
 Նա որ հաւատայր եւ յուսայր յԱստուած՝  
 Կարծես արդ չունի յոյս, չունի հաւատ :

Քանզի ճիշդ եօրն օր անկեալ ծնրաղիւր,  
 Հէք մայր, աղօթեց ջերմ պաղատանօք,  
 Ողբերովն յուզեց գերկին եւ գերկիր,  
 Բայց երկիր էր խույ՝ երկին անողոք :

Անկողին որդւոյն ուր սեր տեղայր վարդ  
 Փոխեր է յանկարծ ի սել գերեզման,  
 Պսակն հիմնեան՝ դագաղին է գարդ,  
 Եւ քօղն հարսանեաց՝ մեռելոյ պատան :

Ժպիտք եւ համբոյրք, գեղ կեանք, յիշատակ  
 Ճնդեցան որպէս հողմավար ստուեր .  
 Եւ մոռացուբեան ցուրտ վերմակին տակ  
 Թաղեցան երկու սրտի գաղտնիքներ :

Ա՛հ գերեզմանին լսեցէք խորեն  
 Որդեր որ կրծեն ձեռքերն այն քնքոյշ .  
 Լսեցէք հապա սողունք որ փորեն  
 Գեռ սիրով լցուած աչքերն այն մեղոյշ . . .

Հող էր՝ հող դարձաւ . . . սակայն իւր հոգին  
 Բնուբեան անհուն հոգւոյն խառնեցաւ,  
 Եւ արդ հողմոց հետ հեծէ լալագին,  
 Կամ փայլէ գերդ աստղ արտասուօք խոնաւ

Սեր՝ երջանկութիւն բնակեր յայս տուն,  
 Հիմա անգուր մահ կանգնեց գիր արոտ.  
 Թշուա՛ն մայր ... կսկիծն է գիր ճակատուն,  
 Վիշտ՝ ժառանգորդւոյն, իսկ ցաւն է իւր բոտ:


 Հ Ո Գ Ի
 

Էակ անձանօր՝ ճառագայթ անհիւր  
 Որ զաշխարհ գրկես, ներշնչես ի նիւր,  
 Որ յօղես մարդիկ ընդ գուարբնոց դաս,  
 Հոգի՛ դու, յորմէ՞ ծագիս, յո՞ դառնաս:

Մանուկրն կարծէ՛ յաստեղս է քո բոյն,  
 Կոյսը՛ քէ դու ես վարդին հոտ եւ գոյն.  
 Նաւաստեաց համար դու ձայն ես հողմոց,  
 Եւ րանաստեղծին՝ հառաչանաց բոց:

Հոգի, յորմե՞ դու ծագիս, յո՞ դառնաս .  
Ոչ մարդն այս գաղտնեաց եղև վերահաս  
Իմաստունք ըսին քե յոյսեն բղխիս ,  
Իսկ յիմարք կարծեն քե յոչինչ փոխիս :

Եսն՝ առանց քեզի աննշան մ'ե ձայն,  
Առանց քեզի՝ յոյսն է պարզեւ ունայն ,  
Եւ առանց քեզի՝ հողածնաց համար  
Չիք անմահութեան եւ ոչ գաղափար :

\* \* \*

Ծաղկանց հունտի պէս՝ հոգւոց բիր երամ  
Միքե՞ կը ցանուին ձեռք նախախնամ ,  
Թե մի ամբողջ ես՝ հոգի անբաժան  
Կապ տիեզերաց՝ հիւլէ անսահման :

Երբ խորհիմ խօսիմ քեզ հետ դեմ առ դեմ,  
Բաշ գգամ գքեզ, գոգցես շօշափեմ,  
Բայց ինչո՞ւ մոռնամ գքեզ ես ի քուն ,  
Արդե՞ք մոռացումն է եւ յետ մահուն :


Ինչո՞ւ տառապիս երբ հիւժիմ հիւանդ ,  
Գու տեր ե՞ս մարմնոյս քե ի նա աւանդ ,  
Ինչո՞ւ պակասիս երբ նիւրբ փտտի ,  
Ի՞նչ կայ քո միջեւ եւ անարգ նիւրբի :

Մերք հեզահամբոյր, զուարթ հաշտարար ,  
Ծաղիկներ զարնան դու առնես դաշար .  
Եւ մերք աւերիչ, անգուր , ահաւոր  
Յուզես ծովերու անդունդները խոր :

Միքե՞ նոյն աղբիր, միքե՞ նոյն պատճառ  
Հոսե՛ ալիքներ պղտոր եւ պայծառ .  
Հոգի՞՜ դու յորմե՞ ծագիս, յո՞ դառնաս  
Որ գործես բարի , որ գործես վնաս :

Թե յորմե՛ ծագիս ի՞նչ փոյր ինձ գիտնայ,  
Երբ դու ազնիւ ես, ամբիժ եւ ժուժկայ ,  
Երբ բարւոյն համար յոգնիս անձանձիր ,  
Որ սուրբ աղբիւրեն ըղխար՝ հոն դարձիր :

Բայց երբ չար ես դու, կեղծաւոր ու ցած,  
Յայնժամ նարցանեմ ես տարակուսած ,  
Թե յորմե՞ ծագիս, յո՞ դառնաս... ավասն ,  
Պատասխանը՜ միշտ բաղուի մահուն փոս :



## ՄԻ ՄՈՒՆԱՐ ԶԻՍ — (Forget me not)

Երբ առաւօտուն լուսի գերես,  
 Հարցի՛ ի՞նչ հոտ է որ ջրոյս խառնես.  
 Սորա անունն է, ըսիր, Պեարրիս,  
 «Մի՛ մոռանար զիս:»

Ոչ մոռնամ գրեզ, դուստր իմ վստան լե՛ր.  
 Բայց տաղտուկ հոգեր պան մի քո պատկեր  
 Թե լինեն ծածկնն, կրկնէ՛ Պեարրիս,  
 Հնչր, մի՛ մոռնար զիս:

Ոչ գրեզ մոռնամ, բայց հոգիս երբոր  
 Հեշտ երագներով շրջի լերկնից խոր,  
 Ե՛կ զիս արբնցուր, ըսէ՛ ականջիս,  
 Հնչր, մի՛ մոռնար զիս:

Ոչ մոռնամ՝ ընաւ, սակայն երբ այգուն  
 Հիացեալ լսեմ գեղգեղ հաւերուն,  
 Երգելով եւ դու ըսէ՛ Պեարրիս,  
 Հնչր, մի՛ մոռնար զիս:

\* Ոչ մոռնամ գրեզ, բայց գուարք լուսնակ  
 Թե մոռցընէլ տայ ինձ քո լիշատակ,  
 Ե՛կ դու ինձ ծպտե՛, ըսէ՛ Պեարրիս,  
 Հնչր մի՛ մոռնար զիս:

Եւ ինչպէս մոռնամ զի դու իմ բոջուն,  
 Դու ես իմ երագ, իմ լուսնակ սիրուն.  
 Բո հոտ՝ քո ծպխա միշտ կրկնեն սրտիս,  
 Հնչր, մի՛ մոռնար զիս:

Ո՛վ դուստր իմ գրեզ ոչ մոռնամ երբեք,  
 Բայց ափսո՛ս երբոր հիւժիմ վշտարեկ,  
 Եւ դու աղօթես՝ անմեղ Պեարրիս,  
 Մի՛ մոռնար եւ զիս:

## Ա Ս Տ Ե Ղ Ք



## Առ Օր. Վիրժինի Թօխարեան

Երբ գիշեր պարզ եւ հաշտ է ծով,  
 Ինչո՞ւ մենիկ նստիս արբուն,  
 Հետաքրքիր՝ ապշած ոգւով  
 Ի՞նչ հարցանես դու աստղերուն  
 Երբ գիշեր պարզ եւ հաշտ է ծով:

Խորճրդաւոր բնութեան գաղտնիս  
 Երբ այդքան անձկաս քննել,  
 Լսե՞ք մըմունջն իմ քնարիս  
 Որ քեզ մեկնէ ի գուարբ քել  
 Խորճրդաւոր բնութեան գաղտնիս:

Այն շողշողուն կէտեր պայծառ  
 Որ բրբռան լերկնից երես՝  
 Նման աչաց քոց լուսավառ,  
 Ի՞նչ սուրբ գանձեր ծածկեն՝ գիտե՞ս,  
 Այն շողշողուն կէտեր պայծառ:

Գեւափրիք հոգիք մարդոց  
 Որք ոչ ծնած են տակաւին,  
 Կըսեն նախնիք քե՛ ոսկերոց  
 Այն աստեղաց մեջ կազմուին՝  
 Գեւափրիք հոգիք մարդոց:

Հոն բոցելով գերդ բիրենիկ  
 Կամ լողայով քերե՛ աշխոյժ,  
 Լուսոյ ծովուն մեջ բափառիկ,  
 Ծծեն բուն իսկ աստեղաց ոյժ,  
 Հոն բոցելով գերդ բիրենիկ:

Արեւ՝ քաջաց է օրեան,  
 եւ Երեւակ՝ հոգւոց հըլու.  
 Լուսնբազն է գիտնոց որբան,  
 Բախտաւորացն է փայլածու,  
 Արեւ քաջաց է օրեան:

Բայց կոյս հոգւոց՝ քեզի նման,  
 Քոյնն է յատուկ՝ այն զուարթուն  
 Աստղն Արուսեակ՝ սիրոյ պաշտպան,  
 Որ միշտ ժպտի առաւօտուն  
 Զքնաղ կուսից քեզի նման :



## Ի Մ Ժ Ա Մ Ա Յ Ո Յ Յ



Դու որ բանիս ջրի ջրի գիշեր եւ տիւ,  
 Յոյց տո՛ւր ինձ տեսնեմ ասեղիդ ծայրիւ  
 Թէ ցաւոց ժամերն իմ հաշուես ո՛րքան,  
 Իսկ քանի՛ հաշուես հաճոյից վայրկեան :

Քո ջրի ջրի ձայնին հետ որչափ արդեօ՞ք  
 Սիրաս է բարախեր սիրոյ հրճուանօք.  
 Քո ջրի ջրի ձայնին հետ արդեօ՞ք որչափ  
 Սիրաս է դողդոջեր յուսով սուտախար :

Ո՛վ իմ վաղեմի ընտիր բարեկամ,  
 Քեզ դեմ գանգատիմ զուր տեղ շատ անգամ,  
 Մերք սրտմտելով քե դառնաս վաղվաղ  
 Մերք անիծելով քե քալես դանդաղ :

Մինչդեռ մի արդար մարդու խղճին պես  
 Դու միօրինակ ես հանդարտ զարնես,  
 Եւ ես եմ չիմար՝ ես ինքն անիրաւ  
 Որ փոփոխ կրից լինիմ անձնագրաւ :

Թե հնչես ուրախ՝ քե հնչես տխուր,  
 Խնդամ քե արամիմ, միշտ խարիմ ի զուր,  
 Զի քո մէն մի քայլ՝ կենաց իրական  
 Մի մասըն բառնայ տանի գերեզման :

— — —

2 0 Ն

Առ Օր. Մարի Փախազեան

Այսօր գեղեցիկ քո անուան է տօն,  
 Եւ ես փափաքիմ ընել քեզ մի ձօն,  
 Բայց ոչ մարգարիտ կամ ակն ոսկեղար,  
 Զի սիրտդ է ազնիւ քան զամեն գոհար :

Երե ընծայեմ քեզ վարդ գեղեցիկ,  
 Եւ այն ալ, ափսո՛ս, է շատ վաղանցիկ,  
 Մինչ դու ձիրք ունիս անմեղ հոտ բուրելի  
 Որ վարդին հոտեն քաղցր է առաւելի :

Թե կարենայի՝ փայլուն աստեղներ  
Քաղելով լերկնից, քեզ տայի նուէր,  
Այլ զի չեմ կարող՝ կը մաղբեմ սրտես  
Որ փայլի ճակատ քո միշտ անողի պէս :

### Հ Ո Ւ Ն Ձ Ք

Ծագե արշալոյս՝ վարդ կապած ճակտին,  
Եւ եկեղեցւոյն կոջնակ ննչե հաշտ .  
Մանկունք, ճն աղջկունք, շուտ ելէք յտան  
Ժամ ե հնձելու, վազեցէ՛ք ի դաշտ ,  
Ծագե արշալոյս՝ վարդ կապած ճակտին :

Զևփիւ հունձքերուն բարե տայ վերջին.  
Շողան մանգաղներ ... բողջով իրենց բոյն  
Արտուտին ձագեր սրտատրոփ փախչին .  
Իսկ բարդ բարդ զիգուին հասկեր ոսկեգոյն,  
Զեփիւ հունձքերուն համբոյր տայ վերջին:

Երբ յետին նշոյլ արձակէ արեւ,  
 Արտը նմանի ալեծուի ծովուն,  
 Կապոցներ շարեն կառքերուն վերեւ  
 Որք հոնջելով կը դառնան ի տուն՝  
 Երբ յետին նշոյլ արձակէ արեւ :

Եւ երգք օրհնութեանց դղրդին գայեր,  
 Հաց՝ քրտամբ շահած ո՛րքան է համեղ .  
 Առատ ցորենով լցան համբարներ,  
 Պար բունած կայտոեն մանկունքներ անմեղ,  
 Եւ երգք օրհնութեանց դղրդին գայեր :

Դ Բ Ա Մ

Հարկ չէ միշտ լինիլ խոհուն գիտնական.  
 Յաճախ նա որ է տգետ աննշան՝  
 Ակաղեմիայի ընտրուի անդամ  
 Երէ ունի զրամ :

Զարմանալի են օրենք աշխարհի .  
 Կարծեն քէ ճարտար խօսի եւ խորհի  
 Նա որ իրօք է ապուշ եւ անհամ  
 Երէ ունի զրամ :

Ընկերութեանց մեջ բազմի վերին բարձ,  
 Երկնից մեջ նաև յուսայ առնույ վարձ՝  
 Երբեմբն նա իսկ որ է անգգամ  
 Երբ ունի դրամ :

Ինչ փոյր երբ կառ ըլլայ կամ քոստո,  
 Թէ համրոյրք նորա բուրեն գազիր հոտ,  
 Տօնեն զնա միշտ հեք կանանց երամ  
 Երբ ունի դրամ :

Նա որ ոտնակոխ առնէ գիւր պատիւ,  
 Եւ ծաղրէ ամեն գգացմունք ազնիւ,  
 Նա եւս ստանայ փառք ու բարեկամ  
 Երբ ունի դրամ :

Իրաւունք գտնայ միշտ լեցուն զրգան.  
 Եւ առանց խղճի կուտայ Տեր պապան.  
 Զորս կին մեկ մարդուն, եւ կը հաւատամ,  
 Թէ սա ունի դրամ :



### ՈՒՐ ԵՐԹԱՆ ՀՈԳԻՔ



*Առ Վսեմ. Գրիգոր Էփ. Օսեան*

Ո՛ւր երբան հոգիք, միբե՞ հոն ուր շունջ  
 Հողմոց բափառիկ երբայ անտրտունջ,  
 Կամ հոն ուր անդարձ բաւալին ալիք,  
 Միբե՞ հոն երբան եւ մարդոց հոգիք:

Դու որ զերկնային խորհրդոց մատեան  
 Արդ բաց ընթեռնուս, ո՛վ ազնիւ Օտեան,  
 Պատմէ ինձ հոգւոյդ ուղեւորութիւն  
 Երբ մարմին քո աստ փոխեցաւ յաճիւն :

Պատմէ դեպ ի ո՞ւր սլացար, յո՞ր վայր,  
Յո՞ր աստղ ում այնքան հոգի քո անձկայր,  
Հոգիդ որ ցաւոց գտուելով բովէն  
Այն աստեղաց պէս էր փայլուն արդէն :

Դու ոչ խորշկիր ննջել մահու քուն,  
Զի ոչ վախնայիր զարքնույ յետ մահուն,  
Պատմէ քե՞ գո՞հ ես, քե՞ ցամն փափագ  
Եւ կարօտ սրտիդ անեղբ եւ անյագ :

Դու մտօք վսեմ ճախրէիր մինչ յամբ  
Բայց սիրտ քո չի էր մանկան զգացմամբ.  
Պատմէ քե՞ ի՞նչ վարձ ընդունին յերկին  
Որք անմըմունջ աստ հեծեն տառապին :

Պատմէ քե՞ մեր կեանք՝ մի տգեղ երագ  
Հանդերձեալ կենաց է յառաջավագ,  
Եւ քե՞ հոն մնան մեզ հեշտ, անպղտոր  
Երագներ անվերջ՝ միշտ չքնաղ եւ նոր :

Հոն արդարութեան վրիժուն ճառագայր  
Յոյց տայ այն խիղճեր գորբս տանջէ խայր,  
Իսկ քեզի նման հոգիք վեն ու զգօն  
Իրենց արժանեօք յաւեա փայլին հոն ...

\* \* \*

Վոսփորայ բարձանց՝ յանտառաց ստուեր  
Ուր ոչ աշխարհի հասնին աղմկներ,  
Սա ոտն իմ բացուած լայն ընդարձակ ծով  
Քեզ խորհուրդս ուղղեմ վարանեալ մտքով :

Կարծես այս բարձրեն՝ քեզ աւելի մօտ  
Կամիմ քու ձայնեղ առնուլ զիմ կարօտ...  
Բայց ի խոր ալեաց ընկղմի արեւ  
Եւ գանտառ ծածկէ զիշեր բանձր ու սեւ :

Մեր հորիզոնէն այսպէս մեկնեցար,  
Եւ երկրայուրեան զիս պատեց խաւար .  
Թէ քո հետ տանիս դու մահուն գաղտնիք  
Ո՛վ ինձ մեկնէ քե՞ հւր երբան հոգիք . . .

\* \* \*

Ո՞ւր երբան հոգիք . . . իբրեւ ծաղկանց բոյր  
Միքե՞ կը ցուրին . . . իբրեւ մեղմ համբոյր,  
Իբրեւ երգ բուռցիկ կը մարին միքե՞ .  
Հապա հւր երբան հոգիք . . .

Ո՛վ գիտէ :

## Ե Ր Կ Ի Ն Ք

Անդունդք անսահման երկնից կապուտակ,  
 Ո՞վ երբեք կրցաւ խուզել ձեր յատակ,  
 Եւ անհաս գաղտնեաց ձեր անբախանց քօղ  
 Պատուել՝ փարատել ո՞վ եղեւ կարող:

Թե տիեզերաց մեջ՝ արեւ մի ըիծ,  
 Եւ գողիակոս աննշան մի գիծ,  
 Թե խուն կայծեր են Սայլ եւ Որին  
 Զորս հագիւ չափեց մեծ ճգամը՝ նետուն,

Թե դարեր պետք են բուելու համար  
 Երկնից մեջ ցանուած աստեղքն անհամար,  
 Ո՞րքան գծուծ է իմաստնոց երկրի  
 Գիտուրին որ լոկ չոր հաշւօք բերկրի . . .

\* \* \*

Լուսեղեն կամարք՝ անեզր ասպարեզ  
 Ուր ամեն վայրկեան բեւօք բոցակեզ  
 Աղօթք՝ հառաչանք մեր բարձրանան շեշտ,  
 Ուր հանգչի յուսով ըրբ կուսին պարկեշտ.

Ոսկեփունջ շողեր եւ վարդ արշալոյս,  
 Զարբուցեք անցեալ երազներ հոգւոյս,  
 Հոգւոյս որ անձկայ տակաւին իբրեւ  
 Մանուկ հիացեալ շօշափել գարեւ:

Ո՞հ այս երփնագոյն կամարեն անդին  
 Ես դեռ նշմարեմ այլ չքնաղ երկին,  
 Բայց ի գուր խնդրեմ հորիզոնին ծայր  
 Այն հրեշտակ սիրուն որ ինձ ժպիտ տայր:

ԱՌ ՍԻՐԵԼԻ ԸՆԿԵՐՆ ԻՄ

## Թ Ո Վ Մ Ա Ս Թ Ե Ր Զ Ե Ա Ն

Որպիսի՞ ինչ է այն լար սրտի որ եւ յեւ  
բազմամեայ լուսբեանց ոչ նուազէ յառաջնոյ՜  
պնդուրենէն, այլ եւ առաւելու քաղցրութեամբ՝

Հ. Ղ. Եւոնդ Մ. Ալիբան

Քո յուշատետրին մեջ այն երբեակ տող  
Զորքս գծած է մեծ Հայրն քերթող՝  
Եւ համբուրեցի շրքամբ ջերմեռանդ  
Եւ կազդուրեցաւ հոգիս իմ հիւանդ .

Ո՛վ կրնայ լսել նորա քաղցրիկ լար  
Եւ սիրտ փղձկերով ջ'յուզուիբ' ջիւար :

Նորա՛ որ կրթեց մանկական սիրտ մեր,  
Պարտիմք դու եւ ես սուրբ եւ հեշտ ժամեր ,  
Ժամեր որ անշուշտ բռան մինչ յերկին ,  
Իցի՛ւ թէ մանուկ լինեինք կրկին :

## ՀԱԼՔԻ ԵՒ ԲՐԻՆՔԻԲՈ

Զքնաղ եւ հանդարտ ժամեր, ո՞ր բուք՝  
Ինչպէս խամրեցաք ծաղկանց պէս արագ .  
Ո՛վ հեշտ խորհուրդներ որ մեղմ ալեաց պէս  
Անոյշ մրմնջով հոսեիք սրտես ,  
Ի՞նչ շուտ խոյս տուիք՝ գերդ բոջնոց խմբեր  
Զորս ուժգին հողմունք վանեն անտարբեր :

Հալքի՛ Բրինքիբո, ափունք զովարարք ,  
Զրերուն միջեւ բացուած նունուփարք ,  
Զեր անտառաց մեջ, ձեր բլրոց վերայ  
Եւ վազվառեցի իբրեւ մի տղայ .  
Զեր պայծառ երկնից ձծեցի բարմ օդ ,  
Միշտ կանաչ սոճեաց ձեր շնչեցի նոս .  
Լսեցի կարկաջն ալեաց փրփրաղէզ  
Որք գերդ սիրահար համբուրեն զձեզ ,  
Եւ ձեր հեզաշունչ հողմոց զգուանքեն  
Զովացան խորհուրդք որ ճակատս այրեն :

\* \* \*

Ի՞նչ փոյք ինձ վարձանք նուագներ երգեր  
 Որք չեն շարժեր սիրտ կամ վիշտն ամուրբեր.  
 Ի՞նչ փոյք ինձ խաղեր՝ հանդեսներ տաղտուկ  
 Ուր խոնի ամբոխ, ուր տիրե աղմուկ,  
 Ուր արք եւ կանայք՝ սիրող ցոյցերու,  
 Շուայլ զարդարանք ծախեն իրարու.  
 Եւ ի՞նչ փոյք ինձ այն կայծակներ շինձու  
 Որք դառնան իրրեւ օձեր երկնաջու.  
 Հոյակապ եւ ճոխ պալատներն ի՞նչ փոյք  
 Ուր մեղկ մեծատուն՝ զոր կրծե՛ անձրոյք,  
 Գիշերն ամբողջ՝ շուրջ սեղանին բոյր  
 Թղթերեն մուրայ յուգմունք սրտին չոր.

Բայց երբոր երգեր եւ ջաներ մարին,  
 Սիրեմ ես կղզւոյն յօւրբին խորին.  
 Լուսին՝ որ կամաց կամաց հեռանայ  
 Կարծես բաժնուի ծովէն ակամայ.  
 Ձկնորսի նաւակ մի ծփայ հեռուն,  
 Կարմիր յապտերին լոյս յերես ծովուն  
 Իրրեւ դողդոջուն սիւնակ ծածանի:  
 Երկու նշանաձք առոյգ՝ գեղանի  
 Թեւ ի քեւ գնան պուրակաց յրատուեր  
 Պատմելով միմեանց սիրոյ երագներ:  
 Եւ յանկարծ՝ յերկնից կամար ընդարձակ  
 Չայն մի բարձրանայ անոյշ եւ յատակ.  
 Ո՞վ է որ երգէ զիւր նորածին սեր,  
 Երգին հետ սլանայ եւ հոգին ի վեր:

Բայց ափսոս երգեր եւ ասողեր մարին,  
 Ամեն կողմ տիրե յուրբին խորին...  
 Անոյշ եւ հանդարտ ժամեր, ուր բռաք,  
 Ի՞նչպէս խամբեցաք ծաղկանց պէս արագ:

\* \* \*

Երբ առաւուտուն կանուխ շատ կանուխ  
 Պատառին բափին ստուերք հոժ եւ բուխ,  
 Գիտած է՞ք որջնփ բնութիւնն է խաղաղ,  
 Տեսած է՞ք այգուն գառաջին ծիծաղ...  
 Պատուհանս իմ դեպ ի Տիասքեյոս  
 Աչք իմ յառած են... Հաւեր քաղցրախօս  
 Աստի եւ անտի տան միմեանց ողջոյն.  
 Հորիզոնին ծայր նշույք վարդագոյն  
 Գեպ ի վեր սփռին առ տակաւ տակաւ.  
 Լաջակ մի հիւսեալ ոսկւով՝ ծիրանեաւ  
 Պարզի ընդ այեր. գեփիտներ բերեն  
 Թարմ հողի հոտեր քովի անտառէն,  
 Եւ շարժեն ծառոց մերք ընդ մեր գլուխ:  
 Հիւղին տանիքէն հերմակ կապոյտ ծով  
 Ուղիղ բարձրանայ... Իսկ հեռուն ո՞րջափ  
 Ծովն է գեղեցիկ. իրրեւ յորդ տարափ  
 Լոյսեր կը մաղուին մշուշին մեջէն  
 Տարածելով լայն ծովեր ոսկեղէն.  
 Եւ արեւն ահա ծագէ շողշողուն,  
 Եւ բոջունք հագար, եւ կոջնակ ժամուն

Արարածք ամեն, տիեզերք համայն  
Ողջունեն գնա՝ երգեն յուրախ ձայն . . .  
Անոյշ եւ չքնաղ ժամեր, ո՞ւր բուսք,  
Ինչպէս խամրեցաք ծաղկանց պէս արագ :

\* \* \*

Ոչ սիրեմ երկին մութ եւ ամպամած,  
Ոչ սիրեմ հանդարտ ծով լայնատարած,  
Ոչ անշարժ ծառեր, ոչ հաւեր ի սուգ,  
Ոչ վարդ, ոչ անտառ որ ջունին հոտ՝ շուք,  
Սակայն ի՞նչ պէտք է ծովուն՝ անտառին,  
Ի՞նչ պէտք է երկնից, հաւուն եւ ծառին  
Գեղ, գոյն, հոտ տալու, կեանք տալու համար,  
Պէտք է հովերուն շունչ կենդանարար,  
Պէտք է ճառագայթ մի լոկ գուարբուն :

Միբե՞ ոչ այսպէս է եւ սիրտ մարդուն,  
Երբոր իմ հոգին է մեյամաղձոտ,  
Ի՞նչ խնդրէ եւ ի՞նչ բանի է կարօտ.  
Յուսոյ մի շողին բաւ է ինձ փայլիլ,  
Ուրախութեան ինձ բաւ է մի կարիլ . . .

Հալքի, Բրինձիբո, ձեր ափանց վերայ  
Ձեր սոճեաց ներքեւ սիրով խորհնցայ.  
Ձեր երկնից շողեր, ձեր ալեաց մբմունջ,  
Ձեր անտառաց հոտ, ձեր հովերուն շունչ  
Լցին սրտիս մէջ անոյշ զգացմունք,  
Օրհնեալ ըլլաք դուք ո՞վ սիրուն ափունք:

Մ Ա Հ

Ի մանկուրենէ ուսայ քո անուն,  
Որ ձեզու սարսուտ մէջ ոսկորներուն.  
Երբ զքեզ հնչեն՝ ձեր մանուկ եւ կին  
Սոսկալով ծածկեն ձեռք զերեսնին:

Ի մանկուրենէ լսեմ քո անուն,  
Ման աներեւոյք, որ յոտին կանգուն՝  
Միշտ կանգուն՝ կենաց նեղ սեմին վերայ,  
Տարածես յերկիր մութ ստուեր հսկայ :

Ի մանկուրենե տեսայ զարհուրած  
Յաղբական գործեր քո եւ կոտորած ,  
Տեսայ որ զահեր բագեր փշրեցիր ,  
Վաղեմի փառքեր ըրիր ցան ու ցիր :

Ի մանկուրենե զարհուրած տեսայ  
Որ փափուկ հարսեն զատեցիր փեսայ ,  
Մայրը՝ զաւակն եւ անկարեկիր  
Գրկելով քո սեւ բազկաց մէջ տարիր :

Բայց ո՛ր, ո՛ր տարիր ... այս հարց անաւոր  
Ի մանկուրենե լսեմ ամեն օր .  
Մահ, ո՞ւր տանիս, ո՞ւր ... այս երկրայութիւն  
Անվեհեր քաշաց չորցրնե արիւն :

Սակայն ոչ ի քեն, մահ, դողամք այնչափ  
Որքան անծանօթն աղղկ մեզ սարսափ .  
Շատեր իսկ խնդրեն ըմպել քո բաժակ  
Թէ զիտնային ինչ ծածկես քելիղ տակ :

Ի մանկուրենե յայդ խորհիմ յաճախ ,  
Փարատել կամիմ անծանօթին վախ ...  
Յանծանօթն էի ես զեռ ջճնած  
Եւ չունէի վախ , չունէի կասկած :

Ինչո՞ւ յետ մահուն երկնջիմ նորեն  
Դատնայ յանծանօթն ուր էի արդեն .  
Ինչո՞ւ խորշիմ, մահ, ետեւեղ երբայ  
Թէ որ դու զիս հոն տանիս անխառն :

Ի մանկուրենե կամին զիս խարել ,  
Մահ, չես իրական այլ մի առասպել ,  
Եւ ազատ մտքին համար է ամօր  
Վախնայ այն բանեն որ է անծանօր :

Անծանօր է ինձ այս աշխարհ անգամ  
Եւ այն ամեն իր զոր տեսնեմ՝ զգամ .  
Անծանօր է որ հիւսե քնոյ քել  
Եւ հրեշտակ որ գայ զիս զարբուցանել :

Անծանօր է սեր, անծանօր է յոյս  
Որ քրրոացրնեն զոյգ քեւեր հոգւոյս ,  
Եւ ինձ անծանօր է նոյն ինքն Աստուած  
Զոր մանկուրենես պաշտեմ երկիւղած :


\* \* \*

Մահ, եկ հաշտուիմք, տո՛ւր ինձի քո գաջ,  
Եւ տար հոգիս Տեսոն արոողն յառաջ,  
Երբ նա դատիցք քե ժամն է պատրաստ ,  
Թէ ցաւոց օրերն իմ լցեալ են աստ :

Ե՛կ այգուն կանուխ երբ հաւիկ գարբնու  
Եւ գերգ օրհասին եղերգէ աղու .

Ե՛կ այգուն այգուն , Ե՛կ գգոյշ գգոյշ ,  
Մի վրդովեր կինս որ ննջէ անոյշ :

Ե՛կ այգուն այգուն երբ լոյսն է նուաղ ,  
Եւ աչք յարտասուս եւ շուրթն ի ծիծաղ ,  
Պիտի գտնես զիս յերազ լուսաբոյր ,  
Պատրաստ ընդունիլ քո սառած համբոյր :



## Տ Ա Գ Ն Ա Պ



Բուռն յորձանք կենաց արագ ընթանայ ,  
Արագ զիս յառաջ վանե անխնայ .  
Օրեր եւ ժամեր սահին անդադար ,  
Ոչ մի բոպէ կանգ առնուլ չեմ կրնար :  
Հագիւ քէ ծագէ զուարբ առաւօտ ,  
Տակաւին ժպտիլ ես զգամ կարօտ ,  
Եւ անդէս հասնի զիշեր միզապատ .  
Եքէ փափաքիմ վեր բոջիլ ազատ ,  
Եւ բառիլ վերայ աստեղաց պահ մի .  
Ի վայր գլորէ զիս միշտ ձեռք բշնամի :  
Երբ կամիմ ծծել հովերուն զով շունջ  
Կամ լսել ծովուն ներդաշնակ մրմունջ .  
Հոգեր սնոտի , եւ տագնապ գծուծ  
Բռնութեամբ մղեն զիս հեռու , եւ լուծ  
Աշխարհի այնպէս վրաս ծանրանայ  
Որ շարժիմ յանգեոս իբրեւ մեքենայ :

\* \* \*

Ո՛վ բշուատ հոգի որ իբրև բոջուն  
 Նեղ վանդակի մեջ բանաարկուած ես դուն,  
 Անգոր բեւերդ աստ անդ գարնես ի գուր,  
 Չես կարող խզել կապանքներդ ամուր.  
 Իցի՛ւր քեզ գգայուն լինէիր նուազ՝  
 Գեթ ոչ տանջէիր այսպես հանապազ :  
 Ոչ արփին ունի քեզ համար ժպիտ .  
 Ոչ լերանց սարեր, ոչ կանաչ հովիտ  
 Ոչ են քո բաժին, այլ բաղդին կատակ՝  
 Պետք է բաժակ դառն ըմպես ցյատակ .  
 Մի երջանկութեան յուար դու՛ յիմար ,  
 Ձի պարտիս գոհուիլ մարդկութեան համար .  
 Սակայն գոհ եղիլ երէ քո երգեր  
 Յաւած սրտերու ամոքեն վերքեր :



## Ց Ա Ն Կ

Իմ խորհուրդներ .....	5
Վառլիոր .....	9
Կին .....	13
Յես յիսուն ձմեռն .....	16
Նորածին .....	18
Սիկար .....	20
Օղի .....	22
Մշակ .....	24
Ման հոր փեսին .....	28
Հոգի .....	31
Մի մոռնար զիս .....	34
Ասեղիք .....	36
Իմ ժամացոյց .....	39
Զօն .....	41
Հունձիք .....	43
Դրամ .....	45
Ո՛ւր երբան հոգիք .....	47
Երկինք .....	50
Առ սրբելի լնկերն իմ Թովմաս Թեղեան	52
Հալի եւ Իրինգիք .....	53
Մահ .....	57
Տազնապ .....	61

ՀՀ Ազգային գրադարան



NL0322646

